

**ԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ
ՀԱՆՐԱԿԱՑԱՐԱՆԻ ԿԱՆՈՆԱԿԱՐԳ
(փոփոխություններով)**

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կանոնակարգով սահմանվում է Գավառի պետական համալսարանի (այսուհետ՝ Համալսարան) հանրակացարանում (այսուհետ՝ հանրակացարան) դասախոսների, ուսանողների, Համալսարանի համագործակից կազմակերպությունների ներկայացուցիչների տեղաբաշխման և բնակվելու կանոնները:
2. Սույն կանոնակարգը կարող է լրացվել կամ փոփոխվել Համալսարանի գիտական խորհրդի որոշմամբ:
3. Համալսարանի հանրակացարանի գտնվելու վայրն է՝ ՀՀ Գեղարքունիքի մարզ, ք. Գավառ, Հրանտ Հակոբյան 4, Համալսարանի հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետի մասնաշենքի 1-ին և 2-րդ հարկեր:

II. ՀԱՆՐԱԿԱՑԱՐԱՆԻ ՏԵՂԵՐԻ (ՍԵՆՅԱԿՆԵՐԻ) ԲԱՇԽՄԱՆ ԿԱՐԳԸ

4. Հանրակացարանում կարող են բնակվել Համալսարանի այն դասախոսները և ուսանողները, ովքեր չունեն բնակարան Գավառ քաղաքում և ունեն կացարանի կարիք:
5. Հանրակացարանում դասախոսների բնակությունը կազմակերպվում է անվճար հիմունքներով՝ Համալսարանի ֆինանսական միջոցների հաշվին:
6. Հանրակացարանում ուսանողները բնակվում են վճարովի հիմունքներով՝ տվյալ ուսումնական տարում ԳՊՀ գիտական խորհրդի կողմից հաստատված ամսական վարձի վճարման պայմանով, որն ամրագրվում է ուսանողի և Համալսարանի միջև կնքված պայմանագրում և մնում անխախտ տվյալ ուսումնական տարվա ընթացքում:
7. Հանրակացարանում կարող են բնակվել Համալսարանի միջազգային շարժունության և փոխանակման ծրագրերով Համալսարան այցելած բոլոր դասախոսները, ուսանողները, օտարերկրացի դիմորդները, այլ անձինք՝ վճարովի հիմունքներով, եթե ակադեմիական շարժունությանը վերաբերող միջազգային պայմանագրերով օտարերկրացի դասախոսների, ուսանողների, դիմորդների համար այլ բան նախատեսված չէ:
8. Հանրակացարանում կարող է անվճար հիմունքներով տեղ հատկացվել ներքոհիշյալ կարգավիճակ ունեցող ուսանողներին.
 - 1) զոհված (մահացած), անհայտ կորած զինծառայողների զավակներին,
 - 2) երկկողմանի կամ միակողմանի ծնողազուրկներին,
 - 3) հաշմանդամություն ունեցողներին,
 - 4) բազմազավակ՝ 3 և ավելի անչափահաս (կամ սովորող երեխաներ ունեցող) ընտանիքների զավակներին,

- 5) սոցիալապես անապահով ընտանիքների զավակներին,
- 6) այլ կարգավիճակ ունեցողներին՝ Համալսարանի ռեկտորի որոշմամբ:
9. Հանրակացարանի յուրաքանչյուր սենյակում բնակվելու իրավունք ունի մինչև երկու անձ, այդ թվում՝ հերթափոխի սկզբունքով:
10. Հանրակացարանի սենյակի համար վարձը ուսանողը կարող է վճարել ամսական կտրվածքով, կամ կիսամյակի համար, կամ միանվագ՝ ուսումնական տարվա համար, Համալսարանի հաշվեհամարին բանկային փոխանցումներ կատարելով:
11. Հանրակացարանում բնակվելու ցանկություն ունեցող դասախոսները և ուսանողները Համալսարանի ռեկտորին դիմում են ներկայացնում հանրակացարանում սենյակի անհրաժեշտության մասին:
12. Հանրակացարանի տեղերի (սենյակների) բաշխումն առկա ուսուցման ֆակուլտետի ուսանողների և դասախոսների համար իրականացվում է օգոստոս և սեպտեմբեր ամիսներին, իսկ հեռակա ուսուցման ֆակուլտետի ուսանողների և դասախոսների համար՝ հունվար և հունիս ամիսներին:
13. Հանրակացարանում արական և իգական սեռերի ներկայացուցիչները բնակեցվում են տարբեր սենյակներում: Տարբեր սեռի անձանց նույն սենյակում բնակեցնելն արգելվում է:
14. Հանրակացարանի կրմունալ սպասարկման, սանիտարահիգիենիկ վիճակի և մաքրության պահպանման, պահակային ծառայության, էլեկտրաէներգիայի, ջեռուցման, ջրամատակարարման և ջրահեռացման աշխատանքներն իրականացվում են Համալսարանի կողմից:
15. Հանրակացարանի սենյակներում անարգել կերպով Համալսարանի աշխատակիցների կողմից իրականացվում են սանիտարահիգիենիկ, հակահամաճարակային, հակահրդեհային անվտանգության ապահովման և այլ անհրաժեշտ միջոցառումներ:

III. ՀԱՆՐԱԿԱՑԱՐԱՆՈՒՄ ԲՆԱԿՎԵԼՈՒ ԿԱՆՈՆՆԵՐԸ

16. Հանրակացարանում բնակվողներն իրավունք ունեն՝
 - 1) օգտագործման նպատակով հանրակացարանի պատասխանատուից ստանալու կացության համար անհրաժեշտ պարագաներ և գույք,
 - 2) սահմանված կարգով օգտվելու հանրակացարանի համակարգչային սենյակից, սանհանգույցից, լվացքատնից, խոհանոցից և լոգարանից,
 - 3) պահանջելու հանրակացարանի սպասարկող անձնակազմից բնակության և հանգստի բնականոն պայմանների, անհրաժեշտ կարգուկանոնի ապահովում,
 - 4) սահմանված կարգով իրենց սենյակներում ընդունելու ծնողներին և հարազատներին՝ առանց վերջիններիս գիշերակացի իրավունքի,
 - 5) տևական ժամանակահատվածով հանրակացարանում չբնակվելու և սենյակի բանալիները սահմանված կարգով պատասխանատուին հանձնելու դեպքում նրանից պահանջելու անձնական իրերի պահպանություն,
 - 6) իրենց խնդիրները ներկայացնելու ռեկտորին:
17. Հանրակացարանում բնակվող անձինք պարտավոր են ենթարկվել ներքին կարգուկանոնին, այդ թվում՝ պարտավոր են
 - 1) պահպանել քաղաքացիական համակեցության կանոնները,
 - 2) հետևել հանրակացարանի ներքին կարգացուցակին (ռեժիմ),
 - 3) արգելք չհանդիսանալ մյուս բնակիչների բնակվելուն,
 - 4) խնամքով պահպանել գույքը և մաքրությունը, թե՛ սենյակում, թե՛ ընդհանուր օգտագործման վայրերում (միջանցքներում, հանրակացարանի հարակից տարածքներում),
 - 5) հետևել սանիտարահիգիենիկ, հակահամաճարակային և հակահրդեհային անվտանգության

կանոններին,

- 6) չծխել, ալկոհոլ չօգտագործել,
 - 7) չհրավիրել կողմնակի անձանց, չապահովել վերջիններիս գիշերակացը հանրակացարանի սենյակում,
 - 8) կատարել հանրակացարանի պատասխանատուի բոլոր օրինական պահանջները:
18. Հանրակացարանում բնակվող ուսանողներին արգելվում է.
- 1) աղմկել, աղտոտել շրջապատը կամ կատարել գործողություններ, որոնք կարող են խոչընդոտել հանրակացարանի բնականոն գործունեությանը,
 - 2) առանց հատուկ թույլտվության կամ ծայրահեղ անհրաժեշտության ներկայանալ կամ դուրս գալ հանրակացարանից ժամը 00:00-ից մինչև հաջորդ օրվա առավոտյան 6:00,
 - 3) պահպանել հանրակացարանի անդորրը:
19. Սույն պահանջներին չհետևելը կարող է դիտվել որպես վարչական և քաղաքացիական իրավանորմերի խախտում հանգեցնելով պատասխանատվության:
20. Հանրակացարանի պատասխանատուն պարտավոր է հետևել հանրակացարանի ներքին կարգուկանոնին, կարգավորել բնակիչների համակեցության հետ կապված հարցերը:
21. Հանրակացարանին նյութական վնաս հասցնելու դեպքում բնակվողը սահմանված կարգով ենթարկվում է նյութական պատասխանատվության՝ հասցված վնասը փոխհատուցելով համարժեք դրամով կամ իրով:
22. Հանրակացարանում կողմնակի անձանց գիշերելը խստիվ արգելվում է: Կողմնակի անձանց գիշերակացի հրավիրած բնակիչը կհեռացվի հանրակացարանից:
23. Ուսումնական տարվա ավարտին հանրակացարանում բնակվող բոլոր անձինք պարտավոր են բանալիները հանձնել հանրակացարանի պատասխանատուին, ինչպես նաև ըստ ամրագրման ցուցակի և սահմանված կարգի հանձնել հատկացված գույքը և ազատել հանրակացարանային տեղը (սենյակը):